

Դատական համակարգը
պայքարում է
իր անկախության համար

2018 թ.-ին, Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո բացառիկ իրավիճակ էր ստեղծվել անկախ դատական համակարգ ստեղծելու համար, քանի որ դատական իշխանությունը գործող իշխանության ազդեցությունից դուրս էր հայտնվել: Նոր իշխանությունը կոռուպցիայի դեմ պայքարի տարրերը զարգացնելով, շանս ուներ հասնել համակարգի անկախությանը: Հայտարարվեց անկախ դատական համակարգ հիմնելու պատրաստակամության մասին, սակայն հետագա գործողությունները, որոնք պետք է իրականացվեին արդարադատության համակարգում՝ դատական համակարգի անկախությանը հասնելու համար, տեղի չունեցան: Ավելի ճիշտ, միանգամայն հակառակը տեղի ունեցավ՝ իշխանությունն այդ հնարավորությունն օգտագործում է սեփական կախյալ դատարանն ստեղծելու համար:

Իշխանափոխությունից կարճ ժամանակ անց, դատական համակարգում գործունեություն իրականացնողները միմյանցից անկախ հայտարարեցին, որ վերջին 20 տարիներին դատարանն այդքան կաշկանդված չի եղել, որքան այս կառավարության շրջանում: Պատճառը համակարգում տեղի ունեցող իրադարձություններին այն ակնհայտ միջամտություններն էին, որոնք թույլ էին տալիս երկրի վարչապետը եւ իշխանության տարբեր ճյուղերում ներգրավված պաշտոնյաները:

Երբ դատական իշխանությունում ընտրություններ պետք է իրականացվեին, որոշակի օրինակներով ակնհայտ դարձավ, որ իշխանության եկածների նպատակն արդար դատական համակարգ ստեղծելը չէ: Նպատակն իրենց դատարանն ստեղծելն է, որը որպես մահակ կարող են օգտագործել անցանկալի անձ հայտարարված ցանկացածին պատժելու համար:

Մասնավորապես, իշխանության բոլոր ճյուղերն ակնհայտորեն կողմնակալ եւ անարդար վերաբերմունք դրսևորեցին **Դատական ինքնակառավարման մարմիններից մեկի՝** Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) անդամի ընտրության հարցում: Խորհրդարանական մեծամասնություն կազմող քաղաքական ուժը մերժեց, նույնիսկ ծաղրուծանակի ենթարկեց այն թեկնածուին, որին ինքն էր առաջադրել:

Դրանից առաջ նույն վերաբերմունքն էր դրսևորվել Սահմանադրական դատարանի (ՄԴ) դատավորի թեկնածուի ընտրության ժամանակ՝ հանրապետության նախահագին հարկադրելով առաջադրել միայն իրենց ցանկալի թեկնածուին, որը եւ հաստատվեց այդ պաշտոնում: ՄԴ դատավորի ընտրության դեպքում արդեն իսկ ակնհայտ էր, որ իշխանության համար դատավորի ընտրության չափանիշը նրա բարձրակարգ մասնագետ եւ քաղաքականապես չեզոք լինելը չէ, այլ՝ յուրայինին դատավոր դարձնելը:

Դատական համակարգի անկախության խնդիրը արդարադատության ոլորտի խնդիրների մեջ առաջնային ցուցիչ է հանդիսանում: Անկախության խոչընդոտները

գրեթե նույնական կերպով տեսանելի են թե՛ հանրության համար, թե՛ համակարգի մասնագետների ինքնագնահատումներով, թե՛ մասնագիտական խմբերի գնահատականներով:

Դատարանների անկախության խոչընդոտները

Մինչ այսօր գործադիրն ակնհայտ միջամտել է դատարանների գործունեությանը՝ մեծիմասամբ քաղաքական իրավիճակներով պայմանավորված անձանց (հետընտրական բողոքի ակցիաների մասնակիցներ) քրեական պատասխանատվության ենթարկելու դեպքերում: Նաև՝ Կառավարության ներդրումային ծրագրերն իրականություն դարձնելու ժամանակ, երբ որոշակի տարածքներ հանրային գերակա շահ են ճանաչվել, եւ քաղաքացու սեփականության իրավունքը խախտելով վերցրել են նրանից կամ ունեցվածքը համաչափ չի գնահատվել (Հյուսիսային պողոտայի կառուցումը, Թեղուտի հանքավայրի շահագործումը եւ այլն): Նշված դեպքերում զանգվածաբար բողոքներ են ուղարկվել Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ), կայացված վճիռներով հաստատվել է իրավունքի խախտումը:

Բայց ընդունենք, որ դատարաններն ամեն օր այդպիսի գործեր չեն քննում եւ բոլոր դատարանները չէ, որ այդպիսի գործեր են քննում: Ուրեմն, դատարանի անկախությունը խախտելու պատճառները նաև այլ տեղում պետք է որոնել: Օրինակ, համակարգային կոռուպցիան ի՞նչ այլ դրսևորումներ է ունենում դատարաններում, բացի քաղաքական իրավիճակներից:

Այդ իմաստով շատ հետաքրքրական օրինակ է վերջերս հրապարակված [«Վեոլիա ջուր» ՓԲԸ գործունեության հանրային վերահսկողություն»](#) ֆեյսբուքյան նախաձեռնության իրականացրած մոնիտորինգը: Նախաձեռնությունը օգտվելով DataLex համակարգում առկա տեղեկատվությունից, ուսումնասիրել է «Վեոլիա ջուր» ՓԲԸ գործունեության հետ կապված դատական գործերը՝ բաժանորդների դժգոհության պատճառները հասկանալու համար: **«Մենք բացահայտեցինք մի շատ տարօրինակ օրինաչափություն, ինչը լույս էր սփռում թե՛ բոլոր հայցվորների դժգոհությունների, թե՛ դատական համակարգի նկատմամբ առնվազն այս մասով ձեւավորված անվստահության վրա»**, - նշում են նրանք:

«Երեւան ջուր» ՓԲԸ-ի դեմ առկա է 146 հայց, իսկ 2017 թ-ին «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի դեմ՝ 22-ը: Քանի որ 2018 թ.-ից դատավորների ընտրությունը կատարվում էր վիճակահանությամբ, մենք ուսումնասիրել ենք մինչեւ 2018 թ. գործերը՝ թվով 168 գործ: Պարզեցինք, որ դրանցից ուղիղ 30-ը կամ ընդհանուր հայցերի շուրջ **18%**-ը մակագրվել է Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր **Ռուբեն Ափինյանին**, այն դեպքում, երբ մնացած 138 հայցերը բաժանվել են 32

դատավորների միջեւ: Մտացվում է մեկ դատավորին այս մասով բաժին է հասնում միջինը 4.31 հայց, իսկ պրն Ափինյանին՝ ուղիղ 30-ը:

«Մա խոսուն փաստ է, որ պրն Ափինյանն ուղղակիորեն համարվում է «Երեւան ջուր» - «Վեոլիա ջուր» ընկերության համար նախընտրելի, ցանկալի դատավոր եւ էլ ավելի կարեւոր է, որ հիմնական աշխատանքային վեճերը տեղի են ունեցել այս դատավորի նախագահությամբ եւ, բնականաբար, ավարտվել ի նպաստ գործատուի (մի քանի դեպքերում էլ վերաքննիչ դատարանը բեկանել է Ռ. Ափինյանի վճիռը, բայց դա կարծես թե անուշադրության է մատնվում)», - ասվում է վերլուծության մեջ:

Մենք ուսումնասիրեցինք նաեւ «DataLex դատական տեղեկատվական համակարգում» առկա պրն Ափինյանի 2019 թ. օգոստոսի 1-9-ն ընկած ժամանակահատվածում կայացրած դատական նիստերը եւ բախվեցինք էլ ավելի տարօրինակ իրավիճակի. 2019 թ. օգոստոսի 1-9-ը ներառյալ, Ռ. Ափինյանն անցկացրել է թվով 205 նիստ», - ասվում է վերլուծության մեջ:

Նախաձեռնությունը դիմել է **ԲԴԽ նախագահ Ռ. Վարդազարյանին՝** Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի **դատավոր Ռուբեն Ափինյանին** կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար: «Պաշտոնատար անձանց կողմից բազմիցս է ընդգծվել դատավորների բարեվարքության գնահատման հավասարակշռված կառուցակարգի ներդրման անհրաժեշտությունը, որը թույլ կտա արդյունավետ պայքար մղել դատական իշխանությունում կոռուպցիայի, հովանավորչության, անձնական կապերով առաջնորդվելով դատական ակտ կայացնելու, մարդու իրավունքների հիմնարար խախտումները կոծկելու դեմ եւ, կարծում եմ, Ռուբեն Ափինյանի մասով մեր ներկայացրած սույն դիտողությունները կարժանանան պատշաճ ուշադրության», - գրել են նրանք:

Այսպիսի օրինակներով պետք է պատկերացում կազմել դատական համակարգի կոռումպցվածության մասին, մինչդեռ բոլոր ժամանանակների ընդդիմադիրները համակարգի գնահատականը պայմանավորում են միայն քաղաքական անձանց եւ քաղաքական իրավիճակներով թելադրված դատական ակտերի որակով:

Վերջին շրջանում փաստաբաններին զայրացնում էր այն հանգամանքը, որ հայցերն ամսով վարույթ չէին ընդունում, ծանուցումներ չէին ուղարկում կողմերին թուղթ, դրոշմանիշ չլինելու պատճառաբանությամբ: Ավելի քան 10-ը տարի առաջ էր այդ վիճակը՝ դատավորին էր թողնված դատավարական կանոնավոր պրոցես ապահովելու բոլոր ծախսերը՝ գրենական պիտույքներ, քարտրիջի լիցքավորում, ընդհուպ՝ քարտուղարի վարձատրությունը: Այդքանից հետո հնարավոր էր կանխել կաշառակերությունը: Վերլուծությունների արդյունքում արմատական փոփոխություններ կատարվեցին դատական համակարգում եւ վիճակը շտկվեց: Այսօր դարձյալ նույն իրավիճակի կրկնվելու վտանգը կա:

Իրավիճակը դատական համակարգում

Նախորդ տարիներին դատական համակարգում բարեփոխումներ սկսելու ամեն փուլից առաջ եւ հետո միջազգային եւ տեղական կազմակերպությունների հետազոտություններով գնահատվել է դատարանների գործունեությունից զոհունակության աստիճանը: Դրա հիման վրա ձեւակերպվել են համակարգային խնդիրները, այսօրվա խնդիրներն էլ, հիմնականում, ձեւակերպված են:

Դատական համակարգում արված մոնիտորինգներն արձանագրել են ցածր արդյունավետություն, որի հիմնական պատճառներից մեկը դատարանների գերծանրաբեռնվածությունն է: Մեկ նիստից մյուսն ընկած ընդմիջումներն այնքան երկար են տևում, որ կողմերը մոռանում են, թե ինչ է քննվել նախորդ նիստում եւ որտեղից պետք է շարունակել: Արդյունքում՝ խախտվում են դատական գործերի քննության ողջամիտ ժամկետները, որի հիմքով դատավորները նաեւ կարգապահական պատասխանատվության են ենթարկվում:

Բնականաբար, դատավորներն օրինազանցությունից խուսափելու ելքեր են որոնում: Օրվա մեջ մեկ դատավորի վարույթում 30 եւ ավելի գործ է քննվում, աշխատանքային օրվա ավարտից 5 րոպե առաջ նիստ է նշանակվում: Դա արվում է ոչ թե գործը քննելու, այլ միմիայն քննության ողջամիտ ժամկետը չխախտելու համար: Բայց, շատ հաճախ, նախորդ նիստը չեն էլ հասցնում այնպես ավարտել, որպեսզի հաջորդ նիստի մասնակիցներին դահլիճ հրավիրելով կարողանան մինչեւ 18:00-ն նիստը բացված եւ փակված հայտարարել: Պատկերացրեք հարյուրավոր կիլոմետր հեռավորությունից ժամանած դատավարության մասնակիցների վիճակը, որոնք դահլիճ չեն հասցնում մտնել եւ ձեռնունայն վերադառնում են:

Դատավորներն ակտերը չեն հասցնում սահմանված ժամկետում գրել, ժամանակ շահելու համար, առանց հիմնավորման, դատաքննությունը վերսկսելու մասին որոշումներ են կայացնում, որպեսզի դատական ակտը կայացնելու օրենքով սահմանված ժամկետը չխախտեն: Բայց, միեւնույնն է, այս մանուկներումների դեպքում անգամ, միշտ էլ մի օրենք խախտվում է:

Դատարանների, նաեւ արդարադատություն ապահովող համակարգի այլ կառույցների բեռի մի զգալի մասը բաժին է ընկնում վարչական տուգանքի ենթարկելու պահանջի մասին կամ տուգանքի որոշումների իրավաչափությունը գնահատելու մասին գործերին: Յուրաքանչյուր տարի Հայաստանում կայացվում է մի քանի հարյուր հազար տուգանքի որոշում, իսկ որոշ տվյալների համաձայն՝ միայն ճանապարհային ոստիկանությունը մեկ միլիոնից ավելի տուգանքի որոշում է կայացնում: Դատարանները ողջ օրը քննում են առևտրային բանկերին բնակչության ունեցած վարկային պարտավորությունները չկատարելու գործերը:

Դատարանները բեռնաթափելու համար վերջին տարիներին որոշվեց տեսչական վարույթներն առանց քննելու ուղարկել հարկադիր կատարման, վճարման

կարգադրություններ արձակելու պարտավորությունը նույնպես փոխանցվեց Դատական ակտերի հարկադիր կատարման <https://hetq.am/hy/article/60413> ծառայությանը (ԴԱՀԿ): Իրավաբանները հայտարարեցին, որ դրանով խախտվեց քաղաքացու արդար դատաքննության իրավունքը: Սակայն, ի՞նչ անել, որ չխախտվի քաղաքացու իրավունքը, միաժամանակ չծարաբեռնվի դատարանը: Երկար քննարկվում էր այն առաջարկը, որ պետք է ավելացնել դատավորների եւ հանրային պաշտպանների թիվը: Այն իր հերթին մեծացնելու էր բյուջեի ծախսերը, սակայն դատարաններին չէր ապահովագրելու ծանրաբեռնվելու վտանգից: Այդ պատճառով նախորդ կառավարությունը խուսափեց այս տարբերակից, միաժամանակ, դատարանները բեռնաթափելու հիմնավոր լուծումներ չտվեց:

Հայտնի է, որ պետության ոչ մի օղակ արդյունավետ չի գործում, անգամ համատիրության հետ գործ ունենալու դեպքում, ամենաչնչին հարցով կարող ես հայտնվել դատարանում: Ծանրաբեռնված դատավորը գործի հանգամանքների մեջ խորանալու, որակյալ դատական ակտ կայացնելու հնարավորություն չունի, ավելի հաճախ մոտավոր լուծում է ամրագրում դատական ակտում: Դրանով ծանրաբեռնում է մյուս դատական ատյանները՝ բողոքարկումների թիվը բավականին մեծ է:

Ներկա կառավարությունն իր ծրագրում պետք է պատասխաններ փնտրեր այս հարցին՝ ինչպես բարձրացնել գործադիր իշխանության կառավարման արդյունավետությունը, որպեսզի ապահովվի արդարադատության արդյունավետությունը: Ի՞նչ անել, որպեսզի տուգանքներ գանձելու գործառույթ իրականացնողից դատարաններն անցում կատարեն իրավական վեճեր լուծող մարմնի, իրավական միտքն սկսի զարգանալ:

Համակարգն անկախացնելու նոր իշխանության պատկերացումները. անցումային արդարադատություն

2019 թ. մայիսի 24-ին Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանի նախաձեռնությամբ «Անցումային արդարադատության գործիքների կիրառման հեռանկարները Հայաստանում» խորագրով խորհրդարանական լուումներ անցկացվեցին: Նպատակն էր պարզել, թե հանրության տարբեր շրջանակներն ինչպես են գնահատում Հայաստանում անցումային արդարադատության կիրառման անհրաժեշտությունը, ի՞նչ պատկերացումներ ունեն դրա վերաբերյալ եւ ի՞նչ ակնկալիքներ կան այդ գործընթացից:

Այդ իմաստով ուշագրավ էր Արդարադատության նախարարի տեղակալ Աննա Վարդապետյանի ելույթը, որում ներկայացրեց անցումային արդարադատության http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=11598&year=2019&month=05&day=24 ինստիտուտի միջազգային իրավական հիմքերը: Նրա խոսքով՝ միջազգային իրավական բոլոր փաստաթղթերում անցումային արդարադատությունն ամրագրված

է որպէս գործիքների ու կառուցակարգերի ամբողջություն, որը նպատակ ունի ապահովելու հասարակության անցումը մի իրավիճակից մյուսին: Նշվել է, որ անցումային արդարադատության գործիքակազմն իրավական է ու նպատակ ունի վեր հանելու այն պատճառները, որոնք հանգեցրել են հասարակության մեջ զանգվածային խախտումների:

«Եթէ պետությունը ցանկանում է օգտագործել անցումային արդարադատության մեխանիզմները, դա չի նշանակում, որ պետությունը պարտավորված է բոլոր գործիքները կիրառել: Յուրաքանչյուր պետություն ինքն է ընտրում, թե ինչ գործիքակազմ է իրեն անհրաժեշտ՝ լրացնելու ինստիտուցիոնալ բացը», - ասել է փոխնախարարը:

Ըստ Աննա Վարդապետյանի՝ գործիքակազմն ընտրելիս Հայաստանի Հանրապետությունը երկու իրավական միջազգային հարթակի՝ ՄԱԿ-ի եւ ԵԽ-ի չափանիշներին պետք է հետեւի: Անցումային արդարադատության նպատակներին անցնելով՝ նախարարի տեղակալն ընդգծել է, որ այս գործընթացը միջազգային բոլոր փաստաթղթերում նշվում է հաշտեցման, ոչ թե դիմակայման գործիք:

Անդրադառնալով անցումային արդարադատության գործիքներին՝ բանախոսը նշել է, որ գործիքակազմը հստակ սահմանված է, առաջինը՝ քրեական մեղադրանքներն են, երկրորդը՝ վեթինգը՝ գնահատման գործընթացը: Ըստ նրա՝ վեթինգը պետք է ապահովի պատշաճ հավասարակշռություն իրավունքների տեսանկյունից. գործընթացն անցնող հանրային պաշտոն զբաղեցնող անձի եւ այս գործընթացից ակնկալիք ունեցող հասարակության միջեւ որեւէ դեպքում նվաստացուցիչ իրավիճակ չի ենթադրվում: Ողջամիտ գնահատումը, փոխնախարարի խոսքով, չի կարող արժանապատվությունը նվաստացնող լինել:

Ա. Վարդապետյանը նշել է, որ 2016-2017 թթ. ԵԽ-ի Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (SEPEJ) չափանիշների հիման վրա դատական համակարգի գործունեության գնահատում է իրականացվել: «Դատարաններին առնչվող բոլոր խնդրահարույց հարցերն այդ զեկույցում արտացոլված են», - շեշտեց արդեն նախկին փոխնախարարը:

Որտե՞ղ են դատական համակարգի խնդիրները

Դատական համակարգում Եվրոպական միության ֆինանսավորումով իրականացված վերջին մոնիտորինգի զեկույցը՝ «Արդարադատության ոլորտի վերաբերյալ հանրության կարիքները եւ ակնկալիքները Հայաստանում» http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_1057954891731_Justice_Monitoring.pdf

հրապարակվել է 2017 թ.-ին: Ջեկույցում նշվում է, որ համակարգի նկատմամբ վստահության մակարդակը դեռեւս միջինից ցածր է եւ զերակշռում են դատարանների նկատմամբ բացասական ասոցացիաները: Միաժամանակ նշվում է,

որ դատախիրավական համակարգի վերաբերյալ նման գնահատականները եւ ընկալումները ձեւավորվել են հարցվողների մեծ մասի (63,1%)՝ համակարգից բացարձակ անտեղյակ լինելու պայմաններում:

Վերջին գնահատման արդյունքներով՝ անկախ, ինքնուրույն եւ հաշվետու դատական իշխանության կայացմանը հասնելու համար պետք է ապահովել՝

- **դատարանի մատչելիությունը,**
- **դատավարության արագությունը,**
- **դատական ակտերի վերանայման արդյունավետությունը,**
- **բեռնաթափել ընդհանուր իրավասության դատարանները,**
- **ապահովել դատական բարձրագույն մարմինների՝ Դատարանների ընդհանուր ժողովի եւ Բարձրագույն դատական խորհրդի թափանցիկ եւ արդյունավետ աշխատանքը:**

Ըստ հիշյալ մոնիտորինգի զեկույցի, դատախիրավական մարմինների անկախությունը մեծապես կախված է նրանց ընտրվելու կամ նշանակվելու կարգից, հետեւաբար, այն երաշխավորող գործոններն են՝

- 1) դատախիրավական մարմինների՝ բաց եւ թափանցիկ մրցույթի միջոցով պաշտոնավարման մեկնարկ,
- 2) օրենքների եւ մարդու իրավունքների խախտման դեպքում պաշտոնավարման սահմանափակում,
- 3) գործունեության նկատմամբ հանրային վերահսկողության ձեւավորում:

Դատավորի գործունեության անկախության մեծացումը համակողմանի եւ ընդգրկուն ջանքեր է պահանջում, որտեղ յուրաքանչյուրի մասնակցությունն առանցքային նշանակություն ունի: Նման ընդգրկվածություն ապահովելու համար առաջարկվում է հետեւյալը.

• իրականացնել դատավորի դերի, գործառույթի վերաբերյալ հանրային իրազեկման արդյունավետ միջոցառումներ՝ դատավորի անկախ գործունեությանն աջակցելու հանրային մասնակցությունը մեծացնելու համար:

• Ներդնել դատավորների կողմից իր գործունեության «անօրինական միջնորդության» դեպքերի վերաբերյալ հաղորդումներ կայացնելու կարգեր:

• Մեծացնել համակարգային պատասխանատվության կարգերի արդյունավետությունը՝ բացառելով համակարգի խնդիրների համար դատավորին պատասխանատվության ենթարկելու կամ հայեցողական մոտեցմամբ դատավորների պատասխանատվության բացառման պրակտիկան:

- Դատավորների նշանակման գործընթացում որակավորման ստուգման փուլը երկու մասից է բաղկացած: Առաջինը՝ գրավոր փուլը, համեմատաբար

օբյեկտիվ է, իսկ երկրորդը՝ հարցազրույցը, միայն սուբյեկտիվ է՝ բացառելով օբյեկտիվ որեւէ չափանիշ:

Թափանցիկություն. Դատարանի գործունեության թափանցիկությունն էական հանգամանք է դատական համակարգի նկատմամբ հանրային վստահության համար, ինչպես նաև քաղաքական ազդեցության վտանգը կանխելու երաշխիք է: Այս առումով անհրաժեշտ է համարվում՝

- ապահովել դատավորների նշանակման, առաջխաղացման գործընթացի թափանցիկությունը՝ դատավորների նշանակման չափանիշների տարածման, նշանակումից հետո պարզաբանող տեղեկատվության տարածման միջոցով:
- Սահմանել այնպիսի գործընթաց, որի միջոցով ցանկացած հետաքրքրվող անձ հնարավորություն կունենա ստուգել ընտրության արդյունքները եւ հավաստիանալ, որ դատավորների նշանակման եւ առաջխաղացման գործում Բարձրագույն դատական խորհուրդը պահպանել է ընթացակարգային կանոնները, ընտրության չափանիշները:

ԲԴԽ-ն նախորդ կազմով տարեսկզբին քննարկում էր՝ ինչպես ստեղծել եւ արդյունավետորեն մասնակցել հասարակական վերահսկողության մեխանիզմներին: Արդյունավետ արդարադատության երաշխավորման գերակա ուղղություններ համարվեցին՝

- իշխանությունների բաժանման համակարգում դատական իշխանության գործառնության, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախությունը երաշխավորելու հիմնախնդիրը,
- դատավորների օպտիմալ ծանրաբեռնվածության երաշխավորման ուղղությամբ իրականացվելիք քայլերը,
- արդարադատության ծախսատարության կրճատումը, դատաքննության ողջամիտ ժամկետների պահպանումը:

Մոնիտորինգի զեկույցը դատարանների անկախության վրա գործադիր իշխանության ներագրելու վերաբերյալ հետեւյալ դիտարկումներն է ներկայացնում.

- Դատավորի գործունեության նկատմամբ նախագահի աշխատակազմի ազդեցության քաղաքացիների ընկալումը պայմանավորված է այն հանգամանքով, որ քաղաքացիները մեծ քանակությամբ դիմումներ են ներկայացնում նախագահի վերահսկողական ծառայություն:
- Դատավորի գործունեության նկատմամբ կոնկրետ գործերով հանրապետության նախագահն անձնական ազդեցություն է ունենում:
- Դատավորի գործունեության շրջանակներում ոչ թե իրավական նորմերն են որոշիչ, այլ սուբյեկտիվ նորմերը, որոնք դրսևորվում են ծանոթի միջնորդության, ազդեցության միջոցով:

- *Դատավորի գործունեության վրա նախագահի աշխատակազմն ուղղակիորեն չի ազդում, դա ավելի շատ դրսևորվում է այլ միջնորդ օղակների միջոցով:*
- *Օրենսդիր իշխանությունը կարող է ազդեցություն գործել օրենսդրական ակտերի ընդունման միջոցով:*
- *Դատախազության գործունեությունն այնքանով, որքանով այն դատարանում մեղադրանք է պաշտպանում, գուցե ընկալվի որպես ազդեցություն:*
- *Դատավորի գործունեության վրա առավելապես ազդեցություն ունի դատավորի վերադասը, օրինակ՝ դատավորն իր վարույթում գտնվող գործը քննարկում է վերադասի հետ:*
- *Գործադիր իշխանության ազդեցությունը դրսևորվում է նաև «ծանոթների» համար միջնորդություններով:*

**Եվրոպայի խորհրդի առջև Հայաստանի ստանձնած պարտավորությունները
հակակոռուպցիոն միջոցառումների մասով**

ԵՄ Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբը (ԳԲԿՈ) 2017-ին «Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում» գնահատման 4-րդ փուլի հանձնարարականում շեշտում է, որ գործադիր իշխանության մաս հանդիսացող արդարադատության նախարարի (ԱՆ) ներգրավվածությունը դատավորների նկատմամբ կարգապահական վարույթում կարող է դիտարկվել որպես դատական անկախության հետ ոչ ամբողջությամբ համատեղելի: ԳԲԿՈ-ն առաջարկել է՝ http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_1547948859891_002Report-Greco_ARM-5.pdf

1. վերանայել դատավորների դեմ հարուցվող կարգապահական վարույթում արդարադատության նախարարության դերակատարությունը,
2. ունենալ համապատասխան երաշխիքներ՝ ապահովելու համար, որ կարգապահական վարույթը չօգտագործվի որպես ներգործության կամ դատավորների նկատմամբ հաշվեհարդար իրականացնելու միջոց, ներառյալ՝ դատավորների համար կարգապահական որոշումները դատարան բողոքարկելու հնարավորությունը:

ԳԲԿՈ-ն մտահոգված է, որ **Հանձնարարականի առաջին մասի պահանջները մասամբ են կատարվել**՝ կարծես թե հնարավոր չէ կարգապահական բնույթի որոշումը բողոքարկել դատարան ավելի, քան Սահմանադրական դատարանում դրա սահմանադրականությունը վիճարկելու ձևով: «Կարելի է եզրակացնել, որ հանձնարարականի այս մասը մասամբ է կատարվել», - ասվում է զեկույցում: ԳԲԿՈ-ն առաջարկել է ներմուծել արդյունավետ կանոններ և մեխանիզմներ՝ արդարադատություն իրականացնելիս դատավորների գործունեությանն անհարկի միջամտության դեպքերը բացահայտելու և այդպիսի միջամտություն իրականացնող կամ իրականացնելու փորձ կատարող դատավորներին պատասխանատվության

ենթարկելու համար, որով արգելվում են ցանկացած միջամտություն դատարանի գործունեությանը եւ ցանկացած անհարկի ներգործություն դատարանների վրա, ինչպես նաեւ դատարանների նկատմամբ անհարգալից վերաբերմունքը:

Հակակոռուպցիոն միջոցառումներ՝ «Դատական օրենսգրքի» նախագծով ԲԴԽ-ին տրամադրվում է կարգապահական հարցերում լիազորություններ այն դատավորների նկատմամբ, որոնք միջամտել են մեկ այլ դատավորի գործունեությանը: Կարգապահական վարույթ կարող է հարուցվել նաեւ այն դատավորի նկատմամբ, որը չի հաղորդում իր գործունեությանը միջամտելու մասին: Այլ անձանց կողմից դատավորի գործունեությանն առերեսույթ միջամտության դեպքում ԲԴԽ-ն, հիմնվելով համապատասխան դատավորի հայտարարության վրա, կարող է համապատասխան մարմիններ միջնորդություն ներկայացնել՝ անհարկի միջամտության համար պատասխանատու անձանց պատասխանատվության ենթարկելու համար:

Հակակոռուպցիոն միջոցառումների շարքում մեծ դեր է վերապահվում դատավորների հայտարարագրերի ուսումնասիրությանը: Տեղին է նշել, որ Վճռաբեկ դատարանի նախկին նախագահը եկամուտների տարեկան հայտարարագիր չէր ներկայացնում:

ԳՐԵԿՈ-ն կոչ էր արել Հայաստանի պատվիրակության ղեկավարին՝ ամենաուշը մինչեւ 2019 թ.-ի հունիսի 30-ը լրացուցիչ տեղեկություններ տրամադրել հանձնարարականների կատարման վերաբերյալ:

Մրանք համակարգում առկա խնդրահարույց հարցերն էին ըստ միջազգային կազմակերպությունների ուսումնասիրությունների:

Դատական համակարգի անկախության իշխանությունների ընկալումը

«Իմ քայլը» խմբակցության ղեկավար Նիկոլ Փաշինյանը վարչապետի պաշտոնն ստանձնելուն պես հայտարարեց, որ դատական իշխանության անկախության միակ սպառնալիքը «Բաղրամյան 26»-ից իջեցվող հրահանգներն էին եւ խոստացավ, որ գործադիր իշխանությունն այլեւս հրահանգներ չի տալու:

«Վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանում դատական համակարգի անկախության հիմնական խոչընդոտը եղել է իշխանության օղակներից դատարաններին իջեցվող ապօրինի հրահանգները: Հրահանգավորման այս մեխանիզմը դատավորներին հնարավորություն է տվել պատասխանատվություն չկրել դատական վճիռների համար, որովհետեւ այդ վճիռներն, ըստ էության, կայացվել են իշխանության ամենավերին օղակներում, իսկ դատավորները փաստացի միայն ստորագրել են դրանք: Կառավարությունը բացառում է իշխանական կամ որեւէ այլ օղակներից դատավորների գործունեությանն ապօրինի միջամտելու գործելակերպը

...»,- դատական իշխանության վերաբերյալ միայն այս միտքն է գրված վարչապետ Նիկոլ Փաշինյանի կառավարության ծրագրում:

Եվ այսպես. նորընտիր իշխանությունն ինչպես է ապահովում դատական մարմինների անկախությունը կամ գործադիրից դատավորներին հրահանգները բացառելը:

Առաջին սենսացիոն բացահայտումը տեղի ունեցավ 2018 թ. սեպտեմբերի 11-ին, երբ հրապարակվեց ԱԱԾ տնօրեն Արթուր Վանեցյանի եւ ՀՔԾ պետ Մասուն Խաչատրյանի գաղտնալսված խոսակցությունը, https://www.youtube.com/watch?v=WSEb9D7QyXE&feature=youtu.be&fbclid=IwAR1bDio_vq8mDtEHfFj7ljg4CB8-8clWHmajuyVEoq3fpzFvAGbgTIG2QIj0 հեռախոսագրույցները <https://www.youtube.com/watch?v=bS0dDrBeBfQ&feature=youtu.be> դատավորին հանձնարարական իջեցնելու վերաբերյալ: ԱԱԾ տնօրենն ու ՀՔԾ պետը խոսում են Մարտի 1-ի գործի, դրանով անցնող անձանց կալանավորելու հնարավորության, կալանքի միջնորդությունը քննող դատավորներից մեկի հետ կապվելու ու նրան «դուխ» տալու, դատավորի՝ վախեցած լինելու, կալանավորման միջոցով ցուցմունքներ ստանալու մասին:

Հանրապետության երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կալանքի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ, հիշյալ երկու պաշտոնատար անձինք այսպիսի գրույց են վարում. ԱԱԾ տնօրեն Արթուր Վանեցյանն ասում է, որ դատավորը զանգել է իրեն (նկատի ունի կալանքի միջնորդությունը քննող Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Վաչե Մարգարյանին): «Մի քիչ վախեցած է: Ասեց՝ պետք է նայի ամբողջ գործը: Ասեցի՝ նայի հիմքերը, բայց կալանքը ուզած-չուզած պետք է տաս», - ասել էր Վանեցյանը:

Խոսակցության ժամանակ շոշափվում է նաև վարչապետի անունը, մասնավորապես՝ ԱԱԾ տնօրեն Արթուր Վանեցյանը, խոսելով մեղադրյալ Յուրի Խաչատուրովի կալանքի մասին, ասում է, թե «վարչապետն ասում ա փակենք»:

Հանրապետության երկրորդ նախագահի կալանքի օրինականությունը քննող դատավորն ըմբռնել էր հանձնարարականը: Ռոբերտ Քոչարյանը կրկին կալանավորվեց, իսկ դրանից հետո թերահավատների մոտ անգամ կասկած չմնաց, որ հրահանգները դատարանին շարունակվելու են: Իսկ երբ քրեական վերաքննիչ դատարանը բեկանեց կալանքի որոշումը եւ Ռ. Քոչարյանին ազատեց դատարանի դահլիճից, վարչապետ Նիկոլ Փաշինյանը Հանրապետության հրապարակից դատավորներին սպառնաց՝ «խելքներդ գլուխներդ հավաքեք» եւ այլ http://arminfo.info/full_news.php?id=34047&lang=1 արտահայտություններով: Դատախազության բողոքարկումից հետո կալանքի որոշումը քննող դատավորն ուղղեց նախորդ դատավորի «սխալը»:

Կալանքի տակ գտնվող էքս-նախագահի կալանքի ժամկետը երկարաձգելու որոշումը նրա պաշտպանների կողմից հերթական անգամ բողոքարկվելուց հետո, մայիսի 18-ին, Արցախի հանրապետության ներկա եւ նախկին նախագահների անձնական երաշխավորությամբ, Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դավիթ Գրիգորյանի որոշումով Ռ. Քոչարյանը դատարանի դահլիճից ազատ արձակվեց: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը մայիսի 19-ին կոչ արեց քաղաքացիներին մայիսի 20-ի առավոտյան ժամը 8:30-ից արգելափակել բոլոր դատարանների մուտքերը եւ թույլ չտալ որեւէ մեկի մուտք գործել դատարաններ:

Նրա նպատակը կրկին հանրությանը փողոց դուրս բերելն էր, սակայն ակցիան հարկադրված էին իրականացնել համախոհների նեղ շրջանակով՝ ՔՊ պատգամավորներ եւ այլք: Մայիսի 20-ին դատարանները շրջափակելուց հետո հրաժարական ներկայացրին ԲԴԽ նախագահը, փոխնախագահը, այնուհետեւ կազմի որոշ անդամներ:

«Այս դատական համակարգն անհամատեղելի է նոր Հայաստանի հետ»,- ասաց վարչապետ Փաշինյանը «Ազատություն» TV-ի ուղիղ եթերում: Մեր խնդիրն է ունենալ անկախ դատական համակարգ: Վարչապետ ընտրվելուց հետո ես ասել եմ, որ դատական համակարգի գործերին չեմ միջամտելու, պետք է լինի դատական համակարգի անկախություն, բայց մի տարի հետո պարզվում է, որ դատական համակարգն իրեն ոչ թե անկախ, այլ անտեր է զգում ու ման է գալիս՝ ո՞վ կարող է տեր դառնալ իրեն:

Փաշինյանն անդրադարձավ նաեւ Ռ. Քոչարյանի խափանման միջոցը փոխելուց եւ ազատ արձակելուց հետո դատարանների մուտքերը փակելու կոչին: «Դա սիմվոլիկ ակցիա էր երկու բան ցույց տալու համար՝ որ ժողովուրդ ջան, բավական է ասեք, թե ինչու ես որոշեցի եւ մեկին բաց թողել, մյուսին բռնել, եւ ցույց տալ, որ չի կարող լինել այն դատական համակարգը, որին ժողովուրդը չի վստահում: Ես չեմ ուզում կրել այդ պատասխանատվությունը... Սա տիրոջ ստրուկ դատական համակարգ է: Փոխանակ մի տարվա ընթացքում այդ համակարգը եւ դատավորները զբաղվեն ինքնամաքմամբ, ասեն՝ այս ինչ ազատագրում էք ստացել, հնարավորություն ունենք արժանապատիվ դատավոր եւ քաղաքացի լինել, <https://www.azatutyun.am/a/30061355.html> *գնացել են անկյուններում իրենց հին տերերին են փնտրում: Դռների տակ վնգստում են՝ եկեք մեզ տիրություն արեք, բա մենք 400 հազար դրամով ո՞նց ապրենք, բա լավ չէ՞ր էն ժամանակ. մեզ փող էիք տալիս, մեզ հաց էիք տալիս, մեզ համար խաշ ու քյաբաբ էիք ուղարկում: Այդ դատական համակարգը՝ սկսած Մահմանադրական դատարանից մինչեւ վերջ, անհամատեղելի է նոր Հայաստանի հետ», - նշեց Փաշինյանը:*

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ներկա գտնվելով Բարձրագույն դատական խորհրդի նստավայրի բացման արարողությանը, իր խոսքում ասել էր, որ անկախության

առաջին օրից խոսել են դատական անկախ համակարգ ունենալու մասին, բայց այդպես էլ չի եղել այնպիսի դատական համակարգ, որը կապահովի արդարությունը երկրում, օրինականությունը, հակակշիռների եւ փոխզսպումների մեխանիզմը: «Ես երաշխավորում եմ մի բան, որ ՀՀ-ում հաստատված իշխանության համար իրապես անկախ, ոչ թե թղթի վրա, այլ իրապես անկախ դատական համակարգ ունենալը բացարձակ առաջնահերթություն <https://www.aravot.am/2019/04/10/1035149/> է...»:

Վերջինգի կիրառման հայկական տարբերակը

Ինչպես ԱՆ փոխնախարարն էր հայտնել օրենսդիր մարմնի ամբիոնից՝ վերջինգը պետք է ապահովի պատշաճ հավասարակշռություն իրավունքների տեսանկյունից. գործընթացն անցնող հանրային պաշտոն զբաղեցնող անձի եւ այս գործընթացից ակնկալիք ունեցող հասարակության միջեւ որեւէ դեպքում նվաստացուցիչ իրավիճակ չի ենթադրվում:

Սակայն, իրականում «վերջինգի» չօրինականացված գործընթացը չափազանց նվաստացուցիչ ընթացք ունի, եւ այն առաջինը դրսևորվեց վերաքննիչ քրեական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու Ալեքսանդր Ազարյանի նկատմամբ՝ Ռ. Քոչարյանին անձեռնմխելիության հիմքով կալանքից ազատելուց հետո: Հանրային պարսավանքի ենթարկելուց, սպառնալիքներից եւ այլ տեսակի հետապնդումներից հետո Բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահ Սմբատ Գոգյանի նախաձեռնությամբ Ազգային ժողովում քննարկվեց <https://hetq.am/hy/article/104069> դատավոր Ազարյանի ատենախոսության օրինականության հարցը: Դատավորին վարկաբեկելու բոլոր անթույլատրելի միջոցներին դիմելուց հետո հայտարարվեց, որ գիտական կոչումը նրանից չեն կարող վերցնել: Այսինքն, դա արվեց ի ցույց մյուսների՝ «խելքներդ գլուխներդ հավաքելու» կոչի:

Էքս-նախագահ Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ հետապնդումը անձեռնմխելիության հիմքով չդադարեցնելու վերաբերյալ բողոքի քննությունը վերաքննիչ քրեական դատարանում դատավոր Ալեքսանդր Ազարյանին մակագրելը, կարծում ենք պատահականություն չէր: Իշխանափոխությունից հետո փաստաբանները սոցիալական ցանցերում գրառումներ էին կատարում՝ Վճռաբեկ դատարանի նախագահի պաշտոնում ցանկանալով տեսնել Ա. Ազարյանին: Վերջինս բնութագրվում էր որպես բարձակարգ մասնագետ եւ մարդկային բարձր հատկանիշներով օժտված անձնավորություն:

Ա. Ազարյանից հետո վարկաբեկելու հերթը դատավոր Դավիթ Գրիգորյանին էր:

2019 թ. մայիսի 6-ին, երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Յուրի Խաչատուրովի, ՊՆ նախկին նախարար Սեյրան Օհանյանի եւ

նախկին փոխվարչապետ Արմեն Գեւորգյանի գործը մակագրվել էր Երեւան քաղաքի առաջին աստանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դավիթ Գրիգորյանին <https://hetq.am/hy/article/103424>: ԲԴԽ-ի հասարակայնության հետ կապերի եւ արարողակարգի վարչության պետ Արման Խաչատրյանն իր ֆեյսբուքյան էջում գրել էր, որ գործի քննությունը Դավիթ Գրիգորյանին մակագրվել է համակարգչային եղանակով, պատահական բաշխման սկզբունքով:

Ռ. Քոչարյանին անձնական երաշխավորությամբ կալանքից ազատելուց բացի, դատավոր Դ. Գրիգորյանը նաեւ կասեցրել էր նրա եւ մյուսների վերաբերյալ գործի վարույթը եւ այն ուղարկել Սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի՝ ՄԴ համապատասխանության հարցը որոշելու համար: Հիշեցնենք, որ **Ռ. Քոչարյանը** մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով եւ 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ սահմանադրական կարգը տապալելու եւ առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու մեջ:

Այս առթիվ արտահայտված մի խումբ իրավաբաններ հիմնավորում էին, որ դատավորը գործել է իր լիազորությունների շրջանակում եւ իր վարույթում գտնվող գործի հետ կապված պարզաբանումներ է ցանկացել ստանալ մինչեւ դատաքննությունն սկսվելը:

Դատավոր Գրիգորյանի վերաբերյալ, մինչ այդ, 2019 թ.-ին փետրվարին հանցագործության մասին հաղորդում էր ներկայացվել՝ պաշտոնեական կեղծիք կատարելու ենթադրյալ դեպքի առթիվ: Հաղորդման հիման վրա, սակայն, քրեական գործ չէր հարուցվել: Ռ. Քոչարյանին ազատ արձակելու վերաբերյալ Գրիգորյանի կայացրած դատական ակտից որոշ ժամանակ անց գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը վերացրել էր քրեական գործ չհարուցելու վերաբերյալ որոշումը:

Ռ. Քոչարյանի գործով կայացված որոշումներից հետո հայտնի դարձավ, որ ենթադրյալ կեղծիքների դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ, որի շրջանակներում հուլիսի 16-ին Հատուկ քննչական ծառայությունը (ՀՔԾ) խուզարկություններ է կատարել առաջին աստանի դատավոր Դավիթ Գրիգորյանի աշխատասենյակում՝ առգրավելով նաեւ Ռոբերտ Քոչարյանի գործին վերաբերող նյութերը, ապա քրեական հետապնդում է սկսել նրա դեմ:

ԲԴԽ-ն հայտնեց, որ հիշյալ քննչական գործողություններն իրականացնելիս քննիչի կողմից կատարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով չնախատեսված գործողություն՝ կնքվել է դատավոր Դ. Գրիգորյանի աշխատասենյակի մուտքի դուռը եւ դրանով սահմանափակվել է վերջինիս մուտքն իր աշխատասենյակ:

«ՀՀ դատական օրենսգրքի» սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված է, որ քրեական վարույթի շրջանակում դատավորի նկատմամբ գործողությունները կատարվում են՝ առավելագույնս ապահովելով մինչդատական քրեական վարույթի գաղտնիությունը, դատավորի հեղինակության ու անկախության

նկատմամբ հարգանքը, բացառելով դատավորի գործունեությանն ուղղակի կամ անուղղակի որեւէ միջամտություն»,- արձանագրել էր ԲԴԽ-ն:

Իր մտահոգությունն արտահայտելով վարույթն իրականացնող մարմնի կողմից հիշյալ գործողությունն իրականացնելու կապակցությամբ, միաժամանակ կասեցրեց դատավոր Դավիթ Գրիգորյանի լիազորությունները: ԲԴԽ-ն բավարարեց ՀՀ գլխավոր դատախազի միջնորդությունը՝ երկու դրվագով Քրեական օրենսգրքի 314 հոդվածի 1-ին մասի (պաշտոնեական կեղծիք) հատկանիշներով քննվող քրեական գործով դատավոր Դ. Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն տալու մասին, իսկ մեկով՝ մերժեց:

Հարկ է նշել, որ այս դեպքից հետո Ռոբերտ Քոչարյանի գործը քննող բոլոր դատավորներն ըմբռնեցին վարչապետի հանձնարարականը: Երբ դատավոր Դավիթ Գրիգորյանի լիազորությունները կասեցնելուց հետո գործի քննությունը փոխանցվեց Աննա Դանիբեկյանին, ընդհանուր իրավասության դատարանում անակընկալները բացառվեցին: Դատական համակարգի դեմ նախաձեռնած հալածանքները իշխանությունը շարունակեց Սահմանադրական դատարանում: ՄԴ-ն դարձավ դատական համակարգում ընթացող զարգացումների առանցքը: Խիստ քաղաքականացված եւ դատական իշխանության նկատմամբ այս գործով կիրառվող բիրտ ճնշումների ներքո ընթացող, հանրային մեծ հետաքրքրություն ներկայացնող այս դատավարությունն սկսեց ընթանալ անհամեմատ խաղաղ հունով:

Այս հանգամանքն առաջինը նկատեց դատավոր Ալեքսանդր Ազարյանը իր հարցազրույցում <https://www.pastinfo.am/hy/news/2019/11/09/>: Նա հարցով դիմելով լրագրողին ասում է. «Համակարգի վերաբերյալ վերջին բացասական արտահայտությունը Դուք ե՞րբ եք լսել: Հիմա ամեն ինչ նորմալ է՝ Քոչարյանին կալանավորում են, Քոչարյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնում են, Քոչարյանին գրավի դիմաց ազատելու միջնորդությունները մերժվում են, դատական համակարգը նորմալ է աշխատում: Հենց տիկին Դանիբեկյանը փոխի խափանման միջոցը, ես վստահ եմ, որ դարձյալ կխոսեն վեթինգի, անցումային արդարադատության, կոռումպացված դատական համակարգի մասին: Հիմա ամեն ինչ շատ նորմալ է»:

Սահմանադրական դատարանը իշխանությունների թիրախում, ինչպես առաջացավ ՄԴ «ձգնաժամը»

Հուլիսի 8-ի աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը մասամբ վարույթ էր ընդունել <https://hetq.am/hy/article/105461> դատավոր Դավիթ Գրիգորյանի եւ Ռոբերտ Քոչարյանի դիմումները՝ Քրեական օրենսգրքի 300.1 հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը որոշելու հարցով:

Հուլիսի 18-ին ՄԴ-ն ընդունել էր աշխատակարգային որոշումներ՝ «Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի եւ Ռոբերտ Քոչարյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի՝ ՄԴ համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործերով խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով ՄԻԵԴ-ին եւ Վենետիկյան հանձնաժողովին դիմելու եւ այդ կապակցությամբ հիշյալ գործերի վարույթները՝ մինչեւ պատասխաններն ստանալը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի հիմքով կասեցնելու վերաբերյալ:

Հոկտեմբերի 10-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) տեղեկացրեց, որ Հայաստանի Սահմանադրական դատարանի հայցադիմումի վերաբերյալ խորհրդակցական կարծիքը վերաբերում է մինչ այդ տեղի ունեցած դատավարություններին, որոնցում առաջարկվում է ուսումնասիրել Քրեական օրենսգրքի 300.1 հոդվածի սահմանադրականությունը: Խորհրդատվական կարծիք տրամադրելու համար ՄԻԵԴ-ը հոկտեմբերի 7-ին ստեղծել է 17 դատավորից կազմված Մեծ պալատ:

<https://www.panorama.am/am/news/2019/10/14/%D5%84%D4%BB%D4%B5%D4%B4-%D5%8C%D5%B8%D5%A2%D5%A5%D6%80%D5%BF-%D5%94%D5%B8%D5%B9%D5%A1%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE/2180851>

Նշվում է, Մեծ պալատի նախագահը հրավիրել է Սահմանադրական դատարանում ներքաղաքական դատավարության կողմերին, մասնավորապես Ազգային ժողովին եւ ՀՀ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանին, գրավոր դիտարկումներ ներկայացնել մինչեւ 2019 թ.-ի նոյեմբերի 19-ը:

Հայաստանը երկրորդ երկիրն է, որը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 16 արձանագրության համաձայն դիմում է խորհրդատվական կարծիքի համար: Առաջին երկիրը Ֆրանսիան էր: 16-րդ արձանագրությունը թույլ է տալիս այն վավերացրած երկրների բարձրագույն համարվող դատարաններին եւ տրիբունալներին դիմել ՄԻԵԴ՝ ստանալու խորհրդատվական եզրակացություն այն սկզբունքային հարցերի վերաբերյալ, որոնք կապված են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում կամ դրա Արձանագրություններում սահմանված իրավունքների եւ ազատությունների մեկնաբանության կամ կիրառման հետ:

Իհարկե, բոլորին հասկանալի է, որ ՄԻԵԴ դիմում ներկայացնելը ՄԴ-ն որպես վսահության ապահովման գործիք կիրառեց, քանի որ նախորդ դատավորների դեմ իրականացված հալածանքներն այս զգայուն հարցի վերաբերյալ շահարկվել էին եւ քաղաքական ակցիաների վերածվել:

«ՄԻԵԴ-ի կողմից ՄԴ-ի ուղարկած դիմումը վարույթ ընդունելու փաստը վկայում է, որ այն կարող էր գոյություն ունենալ եւ կարող էր ներկայացված լինել, այսինքն,

ՄԻԵԴ-ը, վարույթ ընդունելով, նաև արդեն իսկ գնահատել է, որ նման հարց քննարկելու անհրաժեշտություն կա եւ այդ հարցի քննարկումը գտնվում է ՄԻԵԴ տիրույթում»,- «Փաստինֆո»-ին տված հարցազրույցում հայտնել էր Ռ. Քոչարյանի դատապաշտպան Հայկ Ալումյանը:

Փաստաբանը նշել է, որ ՄԻԵԴ-ի կողմից դիմումը վարույթ ընդունելը նաև նշանակեց, ոչ միայն այն, որ ՄԴ-ի դիմումը առնվազն բավարարում էր քննարկմանն ենթակա դիմումների չափանիշին, այլև նշանակում է, որ դատավոր Դ. Գրիգորյանի որոշումը, որը վերաքննիչ դատարանը բեկանեց՝ ի դեմս դատավոր Արմեն Դանիելյանի, եւս հիմնավոր էր, ինչը նշանակում է, որ այնուամենայնիվ, պարզաբանման անհրաժեշտություն կա եւ պարզաբանման անհրաժեշտություն կա անգամ միջազգային դատական աստիճանում»:

Այս տարվա ապրիլի 16-ին խորհրդարանը Սահմանադրական դատարանի (ՄԴ) դատավոր էր ընտրում: Հանրությունն ուշադրությամբ էր հետևում խորհրդարանական իրադարձությանը, որովհետև թեկնածուի առաջադրման գործընթացը խիստ քաղաքականացված էր եղել: Իշխանությունը ոչ միայն չէր թաքցնում, որ իր նախընտրելի թեկնածուն Վահե Գրիգորյանն <https://hetq.am/hy/article/102280> է, այլև թեկնածուի առաջադրման գործընթացին զուգահեռ օրենսդրական փոփոխություններ էր իրականացնում՝ մեկ անգամ արդեն մերժված թեկնածուին կրկին առաջադրվելու հնարավորություն ընձեռելու համար:

Տեւական բանավեճ ծավալվեց այն հարցի շուրջ, թե հանրապետության նախագահը կարո՞ղ է մեկ անգամ մերժված թեկնածուին կրկին առաջադրել ՄԴ դատավորի պաշտոնում: Նախագահ Արմեն Սարգսյանն այդ հարցին պատասխանեց իր ընտրությամբ՝ առաջադրելով իրավաբանության դոկտոր Գոռ Հովհաննիսյանի <https://hetq.am/hy/article/101005> թեկնածությունը:

Այս իրավիճակում ՄԴ դատավորի ընտրությունը փորձություն էր «նոր Հայաստան» կառուցելու խոստումներ տված քաղաքական ուժի համար: Քվեարկության արդյունքներով պարզվելու էր, թե իրականում ինչ արժեհամակարգ ունի Հայաստանի իշխանությունն ստանձնած քաղաքական ուժը, որքանո՞վ են իրական մեկ տարի շարունակ հրապարակներում հնչեցրած՝ ազատ եւ արդար Հայաստան կառուցելու նրանց խոստումները: Կպահպանվի՞ հարգանքը երկրի մյուս ինստիտուտների՝ տվյալ դեպքում հանրապետության նախագահի նկատմամբ, որն արդեն երրորդ անգամն էր ՄԴ դատավորի թեկնածու առաջադրում:

Պատգամավորների առջև կանգնած թեկնածուն օժտված էր դատավորի համար ամենակարելուր հատկանիշներով՝ անթերի կրթություն, անկախ, համարձակ, քաղաքականապես՝ չեզոք: Գոռ Հովհաննիսյանն իր ելույթում խոսեց այն կարելուր չափանիշների մասին, որը պետք է որոշիչ լինի դատավոր ընտրելու հարցում: Միաժամանակ, անուղղակիորեն ընդգծեց իր ակնհայտ առավելությունը

խորհրդարանական մեծամասնության նախընտրելի թեկնածուի նկատմամբ: «Ունեմ գիտելիք, ոչ մի քաղաքական ուժի չեմ հարում, որեւէ մեկին որեւէ բան պարտք չեմ, որեւէ քաղաքական ուժի կամ ներկայացուցչի ծառայություն չեմ մատուցել», - հայտարարեց նա խորհրդարանական ամբիոնից:

Աշխարհի ամենաօրինապահ ու ամենախստապահանջ երկրում՝ Գերմանիայում, գիտական բարձրագույն կոչումը վաստակած իրավաբանին ուղղված հարցադրումներն ակնհայտորեն չէին վկայում պատգամավորների ինտելեկտի մասին: Խորհրդարանականների կարողությունները հազիվ բավարարեցին ամբիոնի առջեւ կանգնած իրավաբանին մի քանի տեխնիկական ու ինտրիգային հարցադրումներ անելու համար: Փակ քվեարկությունից հետո պարզվեց, որ հեղինակավոր գիտնականը չի գոհացրել խորհրդարանական մեծամասնությանը՝ նա 24 ձայն ստացավ:

«Իրավական ուղի» հասարակական կազմակերպությունը ապրիլի 16-ին հրապարակեց «ՀՀ նախագահի կողմից Սահմանադրական դատարանի դատավորի առաջադրման ընթացակարգի վերաբերյալ» զեկույցը https://pathoflaw.org/wp-content/uploads/2019/04/Report_CCJ.pdf?fbclid=IwAR2ay4Z4Og24D8kuvx-STkrmjtiqfZjybt1wHiTd53-B0m5H7UFgsiThzeY, որում ի մի էր բերվել իշխող քաղաքական ուժի ներկայացուցիչներից մի քանիսի մեկնաբանությունները՝ ի պաշտպանություն այդ պահին դեռեւս ՄԴ դատավորի թեկնածու չհանդիսացող այլ անձի՝ Վահե Գրիգորյանի:

«Դոմինանտ քաղաքական ուժի ներկայացուցիչների կողմից՝ չառաջադրված թեկնածուի նախընտրելի լինելու վերաբերյալ բացահայտ դիրքորոշումները, համակցված իրավական արգելքը վերացնելուն միտված օրենսդրական նախաձեռնությամբ, վկայում են գործընթացի նկատմամբ քաղաքական ազդեցությունների բարձր մակարդակի մասին», - ասվում է զեկույցում:

Խորհրդարանական մեծամասնությունն այդ օրը հնարավորություն ուներ ապացուցելու, որ առնվազն կես քայլ առաջ է նախորդ վարկաբեկված, մականունավորների խորդարանից: Սակայն, Գոռ Հովհաննիսյանին մերժեցին ճիշտ նույն սկզբունքով, ինչպես ամիսներ առաջ, նախորդ գումարման խորհրդարանը ՄԴ դատավորի թեկնածու Վահե Գրիգորյանին մերժեց՝ նա յուրային չէր: Հանրության համակրանքը վայելող Գ. Հովհաննիսյանի նկատմամբ ցուցաբերված սույբեկտիվ վերաբերմունքը սպասվածից շուտ սասանեց քաղաքացիների հավատը նորընտիր խորհրդարանի նկատմամբ, միաժամանակ խորացրեց անվստահությունը նրանց կողմից ձեւավորվող Սահմանադրական դատարանի նկատմամբ:

Հունիսի 18-ին Ազգային ժողովը ձայների գերակշիռ մեծամասնությամբ քվեարկեց իշխող կուսակցության թեկնածուի օգտին՝ ՄԴ դատավոր ընտրվեց բոլոր թեկնածուներից ամենաքաղաքականացվածը՝ Վահե Գրիգորյանը: Երկու օր հետո

Վահե Գրիգորյանը Ազգային ժողովում երդվելով իբրև ՄԴ դատավոր հայտարարեց, որ Սահմանադրական դատարան է գնում ՄԴ նախագահի լիազորություններով:

Նորընտիր դատավորը ամբիոնից բառախաղի անցավ ասելով, թե ՄԴ-ի կազմում այս պահին դատավորի կարգավիճակ ունեն միայն ինքն ու դատավոր Արման Դիլանյանը: «Սահմանադրության 166-րդ եւ 170-րդ հոդվածների պահանջով, Սահմանադրական դատարանը կազմված է բացառապես դատավորներից, եւ որոշումների կայացմանը մասնակցում են բացառապես դատավորները: Մինչդեռ ՄԴ-ն անցած մեկ տարվա ընթացքում իներցիայի ուժով գործել է Սահմանադրական դատարանի անդամների կողմից, որոշումների կայացման խնդրահարույց պրակտիկայով: Երբ խնդիրներ ունենում է Սահմանադրական դատարանը, այն էլ՝ կազմի մեծամասնության մասով, դա արդեն խնդիր չէ, այլ ճգնաժամ է: Բայց դա չի նշանակում, որ ճգնաժամները լուծումներ չեն ունենում ...»,- հայտարարեց Վ. Գրիգորյանը:

ՄԴ անդամ եւ ՄԴ դատավոր եզրույթների շահարկումը դադարեց միայն Վենետիկի հանձնաժողովի տարածած մեկնաբանությունից հետո:

ՄԴ դատավորներից ազատվելու համար իշխող քաղաքական ուժը մի քանի պլան էր մշակել, որոնք իրար հետեւից գործի դրվեցին, երբ դատավորները հայտարարեցին, որ չեն պատրաստվում այս կամ այն անձի կոչով թողնել իրենց պաշտոնը:

Հոկտեմբերի 4-ին խորհրդարանը ձայների մեծամասնությամբ ընդունեց ՄԴ նախագահ Հրայր Թովմասյանի լիազորությունները <https://hetq.am/hy/article/108220/> դադարեցնելու հարցով ՄԴ դիմելու նախագիծը:

Հոկտեմբերի 14-ի աշխատակարգային նիստում ՄԴ-ն ԱԺ դիմումի հիման վրա՝ ՄԴ դատավոր Հրայր Թովմասյանի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ գործի քննությունը մերժելու որոշում ընդունեց:

ՄԴ-ի պաշտոնական կայքում հրապարակվեց Հրայր Թովմասյանի հայտարարությունը. <https://hetq.am/hy/article/108159> «Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցության կողմից նախաձեռնած իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարեցնելու գործընթացը, ըստ էության, ունի քաղաքական եւ սուբյեկտիվ նպատակաուղղվածություն»:

ՄԴ նախագահի հայտարարությանը հաջորդեց ՄԴ դատավորների հայտարարությունը. <https://hetq.am/hy/article/105126> «Սահմանադրական դատարանը աշխատում եւ աշխատելու է իր բնականոն հունով՝ ենթարկվելով բացառապես Սահմանադրությանը եւ ապահովելով Սահմանադրության գերակայությունը»:

Քաղաքական հետապնդումներ Հրայր Թովմասյանի նկատմամբ

Հրայր Թովմասյանին պաշտոնանկ անելու գործին լծվել է ոչ միայն Ազգային ժողովը, այլև ողջ իրավապահ համակարգը՝ ընդհուպ Ազգային անվտանգության ծառայությունը: ՄԴ նախագահին հրաժարականը պարտադրելու համար քրեական գործ հարուցվեց՝ նրա արդարադատության նախարար աշխատելու շրջանում կատարված որոշ դեպքերի հետ: Հայտարարված իրավախախտումներին Հ. Թովմասյանի ուղղակի մասնակցությունը չհաստատվեց, որից հետո ձերբակալվեցին նրա մտերիմները: Այդ կերպ իշխանությունը փորձում էր հասնել նրա հրաժարականին, սակայն արդյունքի չհասնելով ցուցադրաբար, հոկտեմբերի 18-ին, ԱԱԾ-ում հարցաքննության կանչվեցին նրա դուստրերն ու հայրը:

ՄԴ նախագահը որոշեց դիմակայել բոլոր տեսակի ճնշումներին եւ չհանձնվել: Այնուհետեւ խորհրդարանում սկսեցին պրպտել նրա ՄԴ դատավոր նշակվելու հանգամանքները եւ հայտարարեցին, որ Հ. Թովմասյանը դատավոր է նշանակվել օրենքի խախտումով: Իրավաբանները պարզաբանում տարածեցին, որ Արարատ Միրզոյանը (եւ էլի այլ պաշտոնյաներ) նույն կերպ է ԱԺ նախագահ նշանակվել: Սակայն իրավապահները Հրայր Թովմասյանի նշանակման հարցում կատարված «անօրինականությունների» համար կալանավորեցին ԱԺ նախկին աշխատակազմի քարտուղարի տեղակալ Արսեն Բաբայանին, մեղադրանք առաջադրվեց նաեւ ԱԺ նախկին նախագահ Արա Բաբոյանին:

ՄԴ նախագահ Հրայր Թովմասյանի պաշտպանական թիմը հայտարարություն տարածեց նրա հետ կապված գործընթացների վերաբերյալ: «Հաստատապես իմանալով, որ Հ. Թովմասյանի դեմ քաղաքական իշխանությունների կողմից ուղղորդվող գործընթացները շարունակաբար զուգորդվելու են քրեադատավարական ընթացակարգերի կոպտագույն խախտումով: Հայտնում ենք, որ այս զավեշտի պայմաններում ապահովելու ենք Սահմանադրական դատարանի նախագահի իրավունքների պաշտպանությունը՝ պայքարելով Հայաստանի Հանրապետության անկախ դատական իշխանության կայացման համար», - ասվում էր հայտարարության մեջ:

Տեսնելով, որ ՄԴ դատավորները չեն ընկճվում բիրտ ճնշումներից, Կառավարությունը մշակեց օրենսդրական մի նախագիծ, որով ՄԴ դատավորներին կամովին վաղաժամ կենսաթոշակի ուղարկելու պայման էր առաջարկում՝ ցկյանս պահպանելով նրանց աշխատավարձը, կենսաթոշակը, հավելավճարները: Հանրությունն անգամ ընդվզեց այս առաջարկի դեմ՝ անընդունելի համարելով պետական բյուջեի միջոցների մսխումը, իսկ ՄԴ դատավորները հայտարարեցին, որ անաշխատ եկամուտ ստանալն անպատվաբեր են համարում:

Վենետիկի հանձնաժողովը կրկին միջամտեց դատական համակարգի անկախությանն սպառնացող հերթական անընդունելի քաղաքական ակցիային: «Վենետիկի հանձնաժողովը ցանկանում է ընդգծել, որ Սահմանադրական դատարանի դատավորների պաշտոնավարման անվտանգությունը նրանց անկախության էական երաշխիքն է: Դատավորների անփոփոխելիությունը Սահմանադրական դատարանի դատավորների համար նախագծված է որպես վահան օրվա քաղաքական մեծամասնության ազդեցությունից: Անթույլատրելի է, երբ ցանկացած նոր կառավարություն կարողանա փոխարինել պաշտոնավարող դատարավորներին՝ իր ընտրությամբ նոր ընտրված դատավորներով», - ասվում էր հանձնաժողովի տարածած ծավալուն հայտարարության մեջ <https://blognews.am/arm/news/639257/?fbclid=IwAR3V-0EuK-as8Wg9H-ktL5HIG68jLOPxyiXDt3hP2bTLs4BINoLnlbyZBo>:

Հանձնաժողովը դիտարկում է վաղ կենսաթոշակի անցնելու միայն մեկ սխեմա, այն է՝ երբ ՄԴ դատավորները կենսաթոշակի են անցնում կամավոր, այսինքն՝ ոչ մի վարչական կամ որևէ այլ գործիքակազմ չպետք է կիրառվի: Հանձնաժողովը կարեւորում է, որ դատավորներին վաղ կենսաթոշակի ուղարկելը չդառնա միջոց ՄԴ-ում արդեն քննվող գործերի էլքի վրա ազդելու համար:

Վենետիկի հանձնաժողովի հայտարարություններից հետո իշխանությունները, հարկադրված եղան որոշակի ընկրկել է, հավանաբար, փոփոխություններ կկատարեն նախագծում:

Բայցեւայնպէս, քաղաքական հալածանքների ենթատեքստում պետք է դիտարկել նաեւ այն փաստը, որ վարչապետի հրահանգով այս տարվա հունիսի 20-ին դատարանների մուտքերը փակած քաղաքացիները բռնություն գործադրեցին դատավորների նկատմամբ եւ մնացին անպատիժ: Սահմանադրական դատարանի մոտ ՄԴ անդամ Ալվինա Գյուլումյանի նկատմամբ բռնություն կիրառած անձի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվեց: Մերժվեց նաեւ Երեւանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դավիթ Բալայանին հրելու եւ զցելու փաստով քրեական գործի հարուցումը:

Մինչդեռ, Ռ. Քոչարյանի գործը քննող, Երեւանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աննա Դանիբեկյանին սեպտեմբերի 27-ի երեկոյան հետապնդելու համար ակտիվիստներ Նարեկ Սուրաֆյանին եւ Սարգիս Օհանջանյանին մեղադրանք առաջադրվեց Քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի 1-ին մասով եւ նրանց կալանավորեցին:

Գլխավոր դատախազի մամուլի քարտուղարն իր ֆեյսբուքյան էջում նշում է, որ այս առումով հիմնավորված եւ արդարացված չեն Ա. Գյուլումյանի եւ Աննա Դանիբեկյանի դեպքերը միմյանց հետ համեմատելը եւ դրա հիման վրա ընտրողական մոտեցում ցուցաբերելու վերաբերյալ արվող դատողությունները:

Միջազգային իրավունքի մասնագետ, փաստաբան Արա Ղազարյանը «Փաստինֆո»-ին տված հարցազրույցում հայտնել էր. «Երեք այլ՝ նման իրավիճակներում քրեական հետապնդում չի իրականացվում, այսինքն, միանշանակ խտրական վերաբերմունք չէ, բայց հարց է առաջանում, արդյոք սա տարբերակված վերաբերմունք չէ իշխանությունների կողմից: **Ալվինա Գուլումյանի** ձեռքից ցուցարարն, ընդհանրապես, քաշել էր, այսինքն, ֆիզիկական բռնություն էր գործադրել, էլ չեմ ասում՝ անհարգալից վերաբերմունք: Իշխանությունները քրեական հետապնդում չիրականացրին, իսկ այս դեպքում՝ իրականացնում են:

Մյուս երկու դեպքերը՝ **դատավոր Ազարյանի նկատմամբ հրապարակային ոտնձգությունները, սպառնալիքներն ու վիրավորանքները, դատավոր Բալայանի գործը, երբ նրան թույլ չտվեցին իր աշխատասենյակ մտնել:** Այս ամբողջին իշխանությունները պետք է համարժեք արձագանքեն: Սա տարբերակված վերաբերմունք է, որի համար իշխանությունները պետք է ողջամիտ բացատրություն տան, թե ինչու մի դեպքում չի իրականացվում քրեական հետապնդում, մյուս դեպքում՝ արվում է», - հայտնել է փաստաբան Արա Ղազարյանը:

Նա նաև նշել է, որ դատավոր Աննա Դանիբեկյանին հետապնդելու համար Նարեկ Մուրաֆյանին եւ Սարգիս Օհանջանյանին **կալանավորելը անհրաժեշտ չէր, ավելի նվազ խափանման միջոց կարելի էր կիրառել:**

Իրավապահների անօրինական միջամտություններից զերծ չեն մնում նաև փաստաբանները: Նոյեմբերի 25-ին Փաստաբանների պալատը տեղեկացրեց, որ փաստաբան Հովհաննես Չամսարյանի փաստաբանական գրասենյակից ԱԱԾ քննիչը ցանկանում է առգրավել 2 համակարգիչ <https://hetq.am/hy/article/110213>: Պալատը հիշեցրեց, որ փաստաբանի բնակարանը, տրանսպորտային միջոցը կամ գրասենյակը, ինչպես նաև փաստաբանական կազմակերպության գրասենյակը չեն կարող խուզարկվել փաստաբանական գործունեության հետ առնչվող հանգամանքները պարզելու կապակցությամբ: Չի թույլատրվում փաստաբանին խուզարկել իր մասնագիտական պարտականություններն անմիջականորեն կատարելիս:

«Փաստաբանական համայնքը միակամ է՝ պաշտպանելու իրավական պետության կարեւորագույն ձեռքբերումներից մեկը՝ փաստաբանական գաղտնիքի անձեռնմխելիությունը: Այդ ձեռքբերումը հեշտ չի տրվել, եւ նահանջ չի լինելու», - ասվում է հայտարարության մեջ:

Իշխանությունների «անկախ» դատական համակարգ կառուցելու հետեւանքները

Հանրապետության հեղինակավոր իրավաբաններից Վարուժան Ավետիքյանը վերջերս մի գրառում էր կատարել իր ֆեյսբուքյան էջում՝ ընկերների հետ կիսվելով Անգլիայում տեղի ունեցած Վերակառուցման եւ Զարգացման Եվրոպական բանկի

(ՎՋԵԲ) հրավիրած Արևելյան գործընկերության ներդրումային գագաթնաժողովից ստացած (Eastern-partnership Investment Summit) դրական եւ բացասական տպավորություններով.

1. Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի թե՛ խոսքը, թե՛ մտքերն ու թե՛ կեցվածքը սարեր-ձորեր առաջ էին մնացած երկրների ղեկավարներից: Մոլդովայի, Բելառուսի, Ուկրաինայի, Ադրբեջանի ու Վրաստանի ղեկավարները «մանկիկներ» էին թվում նրա կողքը: Այն հաճելի պահն ապրեցի այսօր, երբ սուրճի ու ճաշի ընդմիջման պահերին գրեթե բոլորը հիացած արտաբերում էին «Armenia» եւ «President Sarkissian» բառերը: Սա դրականը:
2. Ներդրումային ծրագրերի քննարկման ժամանակ ամենաքիչն արտաբերվեց Հայաստանի անունը: Առաջնահերթ խոսվում էր Ուկրաինայի, Վրաստանի ու Բելառուսի մասին: Սա բացասականն ու իրականությունը: Նախագծեր գրեթե չկան:
3. Ներդրումային մարտահրավերների մասով որպես նախապայմաններ անընդհատ շեշտվում էին օրենքի գերակայությունը, դատարանների անկախությունը (որեւէ բան հիշեցնում են սրանք) եւ կառուցվածքային բարեփոխումների անհրաժեշտությունը:

Ամփոփելով նշենք, որ

1. Բարձրագույն դատական խորհուրդը չի ապահովում դատական համակարգի անկախությունը եւ չի պաշտպանում դատավորների անձեռնմխելիությունը:
2. Գործադիր իշխանությունը՝ իրավապահ մարմինների աջակցությամբ եւ անօրինական միջամտություններով անմիջական սպառնալիք է դարձել դատական համակարգի անկախության համար:
3. Սահմանադրական դատարանն ակնհայտ քաղաքական ճնշումներին դեռուս դիմադրելով փորձում է փրկել դատական համակարգի դեմքը: Դատական համակարգում առանձին դատավորներ քաղաքական հալածանքների դիմագրավելով անկախ դատական համակարգի կայացման հիմքն են դնում այսօր:

Սառա Պետրոսյան

Սույն վերլուծությունն իրականացվել է Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի «Քաղաքացիական հասարակության հզորացումը Հայաստանի Հանրապետության մարզերում» ծրագրի շրջանակներում: